# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 15 | Օգոստոս | 2019 թ. |
| **[4] Մատուցման ամսաթիվը** | | |
| 15 | Օգոստոս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 1813409348 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 15 Օգոստոս, 2019 թ. | Բ1813409348 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

ԳՐԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 2 4 1 0 5 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | «ՖԻՆԼՈՌ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ — N 2474602078940000 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ |
| [13] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [17] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011002160 |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 14801116 | ժամ | 4.5 | 5000 | | 22500 |
| 2 | իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-[illegible]-հայերեն քր. գործ թիվ 09130016 | ժամ | 10 | 13000 | | 130000 |
| Ընդամենը | | | | | | 152500 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

15/08/2019 12:25:33

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## թարգման ներգրավելու մասին

« 09 » սեպտեմբերի 2016թ. ք.Երևան

Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Ա.Հեբոյանս, քննարկելով վարույթիս թիվ 14801116 քրեական գործի նյութերը՝

## Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016 թվականի օգոստոսի 23-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, անհայտ անձը, ուրիշի գույքի բացահայտ հափշտակություն կատարելու դիտավորությամբ, Երևան քաղաքի Արաբկիր 45 փողոցում, Կարինե Ռոլանդի Հովակիմյանի պարանոցից քաշել-պոկելու եղանակով բացահայտ հափշտակել է վերջինիս 230.000 ՀՀ դրամ արժողության ոսկյա շղթան իր ոսկյա խաչով և դիմել փախուստի:

Փաստի առթիվ 26.08.2016 թվականին ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14801116 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ գործով վկա տուժող Սոնա Միրզոյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին և բանավոր խոսքին, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին և բանավոր խոսքին:

Նկատի ունենալով, որ Ս.Միրզոյանի հետ անհրաժեշտ է կատարել քննչական գործողություններ, անհրաժեշտություն է առաջացել նախաքննության ընթացքում ներգրավվել ռուսերեն լեզվին ազատորեն տիրապետող թարգմանիչ, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդ.հոդ. պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Թիվ 14801116 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության աշխատակից Լիլիթ Սամվելի Խաչատրյանին /բն. ք.Երևան, Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական 10/1 շենք, 14 բնակարան/ ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:

2.Թարգման Լիլիթ Սամվելի Խաչատրյան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր.օր. 338 հոդ. նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

**Քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ՝** **Ա.Հեբոյան**

Որոշմանը ծանոթացա, իրավունքներս ու պարտականություններս բացատրված են, ՀՀ քր.օր. 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

**Թարգմանիչ՝** **Լ.Խաչատրյան**

ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա. Հերոյանս, վարույթում քննված թիվ 14801116 քրեական գործով 09.09.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի աշխատակից Լիլիթ Խաչատրյանին, ով կատարել է 4 ժամ 30 րոպե տևողությամբ ռուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի քննիչ                                        Ա. Հերոյան

# ՈՐՈՇՈՒՄ
## թարգմանիչ ներգրավելու մասին

<<03>> նոյեմբեր 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Գ.Յու.Գրիգորյանս, քննարկելու վարույթիս թիվ 09130016 քրեական գործի նյութերը.

### ՊԱՐԶԵՑԻ

Հայկուհի Արմենի Կարաքեշիշյանը խարդախությամբ ուրիշի գույքի խոշոր չափերո հափշտակություն կատարելու մեկ միասնական դիտավորությամբ Ռավի Սանտալ Վադիվայի և Սաննի Նարեշ Գուպտայի վստահությունը չարաշահելու եղանակով՝ նրանց ՀՀ-ում բնակվելու կացության քարտ ձևակերպելու և մի քանի օրից տրամադրելու պատրվակով, Ռավի Սանտալ Վադիվայից հաշվեհամարին փոխանցման եղանակով 2016 թվականի հոկտեմբերի 13-ին Երևան քաղաքի Քանաքեռ 10 փողոց 20 տանը վերցրել է 238.475 ՀՀ դրամին համարժեք 500 ԱՄՆ դոլար գումար, իսկ 2016 թվականի հոկտեմբերի 14-ին Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 1 շենք 47 բնակարանում՝ 285.936 ՀՀ դրամին համարժեք 600 ԱՄՆ դոլար գումար, Ռավի Սանտալ Վադիվային պատճառելով խոշոր չափերի՝ ընդհանուր 524.411 ՀՀ դրամի համարժեք 1100 ԱՄՆ դոլար գույքային վնաս:

Դեպքի առթիվ 27.10.2016թ. ՀՀ քննչական կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 09130016 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Սաննի Նարեշ Գուպտան չի տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է հնդկերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածի պահանջներով.

### ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթիս թիվ 09130016 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Ֆինլոու>> ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Գայանե Գևորգի Աղամալյանին /անձնագիր AN 0534814, տրված 25.06.2013թ. 009-ի կողմից/, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝** [signature] **Գ.Յու.Գրիգորյան**

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են
Թարգմանիչ՝ [signature] /Աղամալյան/

<<3>> նոյեմբեր 2016թ.

# ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Գ.Յու.Գրիգորյանս, տալիս եմ սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթիս թիվ 09130016 քրեական գործով <<Ֆինլոու>> ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Գայանե Աղամալյանը կատարել է հնդկերենից հայերեն և հայերենից հնդկերեն բանավոր թարգմանություն 10 ժամ տևողությամբ:

**Ավագ քննիչ՝** **Գ.Յու.Գրիգորյան**